ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-16
ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք. Երևան «01» «02» 2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և և «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ–ը՝ ի դեմս տնօրեն Գևորգ Վարդանյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 23-ի «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 454-Ն որոշումը, «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2015 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՕ-170-Ն օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով սահմանվում է «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 08 բաժնի, 02 խմբի, 01 դասի «Գրադարանային ծառայություններ» 2016 թվականի ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) պետական աջակցության տրամադրման կարգը, որի շրջանակներում պետական մարմինը պարտավորվում է կազմակերպությանը տրամադրել պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները՝ կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2016 թվականի հունվարի 26-ի N 45-Ա հրամանով ստեղծված պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման ոլորտային հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) արձանագրության և հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

1.2 Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) և ծախսերի նախահաշիվը ներկայացված են սույն պայմանագրի համապատասխանաբար NN 1 և 2 հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 կազմակերպությունից պահանջել ծրագիրն իրականացնել պայմանագրով սահմանված ժամկետում:

2.1.2 կազմակերպությունից պահանջել ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել ըստ նպատակի:

2.1.3 ուսումնասիրել ծրագրի կատարման ընթացքը և աշխատանքների կատարման որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.2 Պետական մարմինը պարտավոր է՝

2.2.1 կազմակերպությանը տրամադրել պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները՝ պայմանագրի 1.1 կետով սահմանված կարգով:

2.3 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1 իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունելու դեպքում պահանջել վճարել իրեն հասանելիք գումարը:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.2 իր ուժերով և իր հաշվին վերացնել աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլ տրված թերությունները:

2.4.3 պետական մարմնին եռօրյա ժամկետում տեղեկացնել աշխատանքների սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին:

2.4.4 պետական մարմնին ներկայացնել աշխատանքների կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 176-Ն հրամանով հաստատված ձևով՝ եռամսյակային (ձև Հ-2, Հ-4 աճողական և տեքստային) և տարեկան/վերջնական (ձև Հ-2, Հ-4 և տեքստային) հաշվետվություններ (այսուհետ՝ հաշվետվություն), մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը.

3. Վճարման կարգը և ժամկետները

3.1 Տրամադրվող սուբսիդիայի առավելագույն չափն է 146773.5 հազար (մեկ հարյուր քառասունվեց միլիոն յոթ հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր) դրամ, սպասարկվող գրականության տարեկան առավելագույն քանակն է՝ 160000 տացք, որի փոփոխումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ՝ կնքելով լրացուցիչ համաձայնագիր: Մեկ միավոր գրականության սպասակման նվազագույն շահավետ գինն է՝ 917.33 դրամ (146773500դրամ/160000տացք), համաձայն Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 24.11.2004թ. N 446-Ն հրամանի՝ գրադարանի վճարովի ծառայությունների գինը հավասար է 0-ի:

3.2 Կազմակերպությանը վճարումներն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված գումարների սահմաններում կազմակերպության կողմից ներկայացվող եռամսյակային հայտերի հիման վրա՝ 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունները սահմանված կարգով հանձնաժողովի կողմից ընդունման արդյունքներով: Ընդ որում՝ առաջին եռամսյակի և յուրաքանչյուր հաջորդ եռամսյակների առաջին ամսվա գումարների վճարումը կատարվում է կազմակերպության կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ մինչև հանձնաժողովի կողմից ներկայացված հաշվետվությունների սահմանված կարգով ընդունումը:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2016 թվականի հունվարի 8-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

5. Աշխատանքների հանձման և ընդունման կարգը

5.1 Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման համար պայմանագրով նախատեսված հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքները պետական մարմնի կողմից ընդունվում են հանձնաժողովի արձանագրությամբ՝ համապատասխան ստորաբաժանման և ֆինանսաբյուջետային վարչության եզրակացությունների հիման վրա:

5.2 Կատարված աշխատանքներում թերություններ հայտնաբերելու դեպքում պետական մարմնի համապատասխան ստորաբաժանումների եզրակացությունների հիման վրա այդ մասին կազմակերպությանը ծանուցվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Այդ դեպքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը հանձնաժողովի կողմից ընդունվում և ստորագրվում է թերությունները վերացնելուց հետո:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2 Կողմերը պարտավոր են վերոհիշյալ իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետևանքների վերացման հնարավոր ժամկետները:

7.3 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից և հետևյալ Հավելվածներից, որոնք կազմում են պայմանագրի անբաժանելի մասը.

Հավելված N 1 – «Գրադարանային ծառայություններ» ծրագրի միջոցառումներ.

Հավելված N 2 – «Գրադարանային ծառայություններ» ծրագրի ծախսերի նախահաշիվ:

8.2 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյանի 5	0051, ք. Երևան, Կոմիտասի 49/3
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011010460	Հ/Հ 1930031500940100
ՀՎՀՀ 02505983	ՀՎՀՀ 00099892
ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ղեկավար՝	«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ	ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ
----------	----------
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Գրադարանային ծառայություններ» 2016թ. ծրագրի «01» «02» 2016թ. N 2.16 պայմանագրի

Միջոցառումը	Ակնկալվող արդյունքը	I եռամսյակ		I կիսամյակ		9 ամիս		Տարի	
		Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը	Ակնկալվող արդյունքը	Գնահատման չափանիշը
Գիտատեխնիկական գրականության հիմնապաշարների արդիականացում, բաժանորդագրման կազմակերպում, համապատասխան մատենագիտական մշակում, պահպանում, նոր ստացված և ռետրո գրականության էլեկտրոնային գրացուցակի ձևավորում:	Ձեռք բերված գիտատեխնիկական նոր գրականություն (օրինակ)	120	օրինակ	280	օրինակ	380	օրինակ	550	օրինակ
	Համալրված էլեկտրոնային քարտարան (գրառում)	3,500	գրառում	7,500	գրառում	11,000	գրառում	16,000	գրառում
Գրադարանային-տեղեկատվական սպասարկման իրականացում ավանդական և ժամանակակից տեղեկատվական-հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ, միջազգային գիտատեխնիկական-տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու ազատ մուտքի տրամադրում, Նոր գրականության և թեմատիկ ցուցահանդեսների, գիտատեխնիկական և գործարար հանրությանն աջակցող միջոցառումների կազմակերպում:	Գրադարանային հիմնապաշարների միջին տարեկան աճահովում (տարբ)	30,000	տարբ	75,000	տարբ	118,000	տարբ	160,000	տարբ
	Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուների թիվը	60	շահառու	110	շահառու	160	շահառու	200	շահառու
	Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր (թիվը)	8	մատ. ցանկ	18	մատ. ցանկ	28	մատ. ցանկ	40	մատ. ցանկ
	Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ	6	ՏԲ	13	ՏԲ	18	ՏԲ	25	ՏԲ
	Նոր գրականության ցուցահանդես (ցուցահանդես)	6	միջոցառում	18	միջոցառում	28	միջոցառում	40	միջոցառում

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար
ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կազմակերպություն
«Նորամուծության և ձեռներեցության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 2

« 01 » « 02 » 2016թ.

N 2-16 պայմանագրի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գրադարանային ծառայություններ» 2016թ. ծրագրի

հազ.դրամ

ՀՀ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գինը	1-ին եռամսյակ		6 ամիս		9 ամիս		տարի		Ընդամենը ծախսեր
					Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	Պետ.բյուջեից հատկ. գումար	Այլ միջոցների գումար	
1	Վարձատրություն և այլ պարտադիր վճարներ	մարդ՝ամիս	91*12	116,84	22049,0		54351,1		85904,8		127600,0		127600,0
2	Գրականության բաժանորդագրություն	օրինակ	600	10,0	0,0		2500,0		2500,0		6000,0		6000,0
3	Պահպանման ծախսեր				4000,0	350,0	5514,9	700,0	10258,3	1050,0	13073,5	1500,0	14573,5
4	Այլ ընթացիկ ծախսեր				20,0	200,0	40,0	800,0	80,0	1500,0	100,0	2000,0	2100,0
5	Հիմնական միջոցի ձեռքբերում					300,0		800,0		1500,0		2500,0	2500,0
	Ընդամենը	**X**	**X**	**X**	**26069,0**	**850,0**	**62406,0**	**2300,0**	**98743,1**	**4050,0**	**146773,5**	**6000,0**	**152773,5**

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարության
աշխատակազմի ղեկավար՝
ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կ.Տ.

Կազմակերպություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝
ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կ.Տ.